

IEP Ժողովի Խորհուրդներ

1. Ընկերոջ հետ եկեք: Ձեզ հետ բերեք մի իրավապաշտպան կամ համայնքի մի անդամ, որը ծանոթ է ձեր երեխայի հարցերին, ինչպես՝ հոգեբան, ընկերային խորհրդատու, բժշկական ծառայության մատակարար, ցերեկային խնամքի մասնագետ, և այլն: Եթե ձեզ մատչելի չէ հատուկ ունակություններ ունեցող կամ մարզված ինչ-որ անձ, եկեք ընկերոջ կամ հարևանի հետ: Այդ անձը կարող է օգնել, որ կարգավորի ժողովի անցուդարձերը: Եթե անձը նաև լավ է ճանաչում ձեր երեխային, կարող է ձեր երեխայի կարիքների մասին արժեքավոր տեղեկություններ կայացնել:

2. Գրառումներ կատարեք: Գրառումներ կատարելով դուք ցույց կտաք, որ ակտիվ մտնեցում եք ցուցաբերում ժողովին: Այն ձեզ համար կլինի մի հեշտ պատրվակ, որ խմբի անդամները վերաբանաձև են հարցերը, որոնց վրայից արագ են անցնում կամ քննարկում են համատարած: Պարզապես ասեք՝ Երանց, որ ուզում եք ձեր գրառումներում ճշգրիտ արտացոլել հարցերը, որպեսզի վստահ լինեք, որ հասկացել եք անցուդարձերը: Երբ գրառումներ անեք, դպրոցական շրջանի մասնագետները հակված կլինեն ձեզ ավելի լուրջ վերաբերվելու և ձեր մասնակցությանը նկատմամբ ավելի ուշադիր գտնվելու:

3. Հարցեր տվեք: Մի վախենաք հարցեր տալուց կամ լուսաբանություն խնդրելուց և ձեր չհասկացած հարցերի և նյութերի բանաձևումները ուզելուց: Կրթական մասնագետները խոսում են հապավումներով (օրինակ՝ SED, DIS, և այլն) որոնք միշտ չէ, որ հեշտ են հասկանում ոչ-կրթական անձինք: Դուք ժողովին ներկա եք որպես մասնակից և ոչ թե դիտորդ: Իմաստալից մասնակցության համար ձեզ անհրաժեշտ է իմանալ, թե ով ինչի մասին է խոսում:

4. Վերաբանաձևեք կարևոր տեղեկությունները: Թարմացված IEP-երում (անհատականացված կրթական ծրագիր) մարդիկ միտում ունեն համառոտելու տեղեկությունները: Տրամաբանությունը հետևյալն է՝ «մենք այն արդեն գիտենք» կամ «այն գրվել է եռամյա IEP-ում»: Եթե կա ձեր երեխայի մասին ինչ-որ կարևոր տեղեկություն, ինչպես՝ առկայությունը AB 3632 հոլումի, ձեր երեխայի վիճակները, վարվեցողության, առողջության կամ այլ գործոնների փոփոխություն, որը կարող է նշանակալիորեն ազդել դասարանին և ձեր երեխայի սովորելուն, նրանցից խնդրեք, որ վերաբանաձևեն թարմացված IEP-ում: Նույնպես, եթե ձեր երեխան փոխում է դպրոցները կամ ծրագրերը, հին փաստաթղթերը երբեմն կորչում, սխալ տեղ դրվում կամ անտեսվում են: Բոլոր կարևոր բաները պետք է գտնվեն ձեր քննարկած փաստաթղթի վրա:

5. Թարգմանիչ խնդրեք: Դուք թարգմանիչ իրավունք ունեք, եթե անգլերենը սահման չգիտեք: Եթե ձեզ թարգմանիչ է հարկավոր և ժողովի ընթացքում չկա այդպիսին, կանգ առեք: Խնդրեք, որ ժողովի նոր թվական նշանակվի: Թարգմանիչը պետք է լինի անձնակազմի անջատ անդամ և ոչ երկու դերակատարությամբ մասնակից: Քանի որ IEP ժողովները կարող են արագ ընթանալ և լինել մասնագիտական քննարկումներով լի, թերևս թարգմանիչ ցանկանաք խնդրել մինչև անգամ եթե կարող եք սովորական գրույցներ վարել անգլերենով: Եթե ձեր անգլերենի իմացությունը սահմանափակ է, դեռևս կարող եք անգլերենով մասնակցել ժողովին ըստ ձեր ցանկության, բայց թարգմանիչ օգնության դիմեք, եթե բարդ հարցեր առաջանան:

6. Հստակացրեք նպատակները և առաջադրանքները: Դպրոցները ժամանակ առ ժամանակ տարբեր մտնեցում են որդեգրում նպատակների և առաջադրանքների հստակության կապակցությամբ: Երբեմն նրանք

կփորձեն գրել ընդհանուր առաջադրանքներ և ասել, որ դա դասատուին և ուսանողին ավելի մեծ ճկունություն կտա առաջադիմելու: Բայց և այնպես, եթե պատահի, որ դասատուն հեռանա դպրոցից կամ ուսանողը դպրոց փոխի, նոր դասատուն մեծապես կօգտվի՝ եթե ձեռքի տակ ունենա մասնավոր առաջադրանքներ, որոնց վրա և կենտրոնանա:

7. Նպատակներ և առաջադրանքներ ավելացրեք

իհարկին: Երբեմն դասատուները IEP ժողովի են գալիս կանխօրոք գրված նպատակներով և առաջադրանքներով: Դա չի խանգարի: Բայց ուշադիր քննեք առաջադրված նպատակները: Ամբողջակա՞ն են արդյոք դրանք: Լուծում առաջարկո՞ւմ են ձեր մտահոգություններին: Արտացոլո՞ւմ են ունակության ընթացիկ մակարդակները: Իրապաշտ կամ դժվարի՞ն են ձեր երեխայի կարիքները բավարարելու չափ: Միջանկյալ նշանակետեր ընդգրկվե՞լ են: Ազատորեն խնդրեք դրանք բարեփոխել: Նույնպես, ազատորեն լրացուցիչ նպատակներ խնդրեք ձեզ մտահոգող հարցերի կապակցությամբ:

8. Մի՛ շտապեք:

Եթե նշանակված ժամանակի ընթացքին չեք կարող շոշափել բոլոր հարցերը, խնդրեք, որ IEP-ը վերստին գումարվի ավելի ուշ թվականի. օրինակ՝ մի շաբաթից կամ 10 օրից, որպեսզի IEP-ը ամբողջական լինի: Հաճախ, դպրոցները մեկից ավել IEP են նշանակում մույն հետմիջօրեին, յուրաքանչյուր կես ժամը կամ 45 րոպեն մեկ: Որոշ IEP-երի համար դա բավարար ժամանակ է, բայց այն բավարար չէ բոլոր գործերի կամ գործերի մեծ մասի համար: Թույլ մի տվեք, որ ձեզ շտապեցնեն, որ ավարտեք և ստորագրեք IEP-ը, եթե բոլոր կարևոր հարցերը ձեզ գոհացնող չափով չեն քննարկվել: Խմբի անդամներին ասեք, որ կցանկանայիք մի քանի օրից վերստին հանդիպել IEP-ը ամբողջացնելու համար, փոխանակ շտապելու: Մեկնելուց առաջ, IEP-ի պատճենը ուղեք տանը այն վերանայելու համար:

9. Ստորագրեք, բայց թարգմանություն պահանջեք:

Եթե ձեզ անհրաժեշտ է IEP փաստաթղթի թարգմանությունը, այն ստորագրեք, պայման դնելով, որ համաձայնվեք թարգմանությանը հետ: Ձեր վերապահությունը գրեք նկատողությունների բաժնում. օրինակ՝ «այս ստորագրությունը դրվում է, պայմանով, որ ես համաձայնվեմ այն թարգմանությանը, որը ինձ պիտի հայթայթի դպրոցը»: Նախընտրելի է, որ այն ստորագրեք՝ փոխանակ թարգմանությանը սպասելու, որովհետև չստորագրված IEP-ը դպրոցին չի հարկադրի սկսել ծառայությունների գործադրությունը: Դուք պետք է ցանկանաք ստորագրել, որպեսզի անհրաժեշտ ծառայություններին անմիջապես կարելի լինի սկսել և նրանք ենթակա չլինեն ձեր ստորագրության սպասումի ձգձգումներին, քանի որ թարգմանությունը կարող է շաբաթներով ուշանալ:

10. Միջանկյալ IEP դասավորեք ըստ հարմարության:

Եթե ձեր երեխայի առաջադիմությունը դանդաղ է եղել, եթե ծրագրի հետ կապված դժվարություններ են առաջացել, կամ եթե ձեր երեխան ունի լուրջ և բարդ հարցեր, թերևս ցանկանաք տարին մի անգամից ավելի հաճախ հանդիպել՝ ստուգելու առաջադիմությունը: Կարող եք խնդրել կիսամյա և մինչև անգամ եռամսյա հանդիպումներ: Լավագույն կլինի IEP-ը լրացնելիս այնտեղ ներառել պայմանական «հաջորդ հանդիպման թվական», քանի որ այդպիսով ուշադրության առարկա կլինի այն իրողությունը, որ տեղի պետք է ունենա միջանկյալ մի վերանայում, և այդ պայմանական թվականը անհրաժեշտ կդարձնի թվականի հաստատման կամ նոր թվական նշանակելու համար կապի հաստատումը: Մինչև անգամ եթե ձեր IEP-ի մեջ չեք ընդգրկել այդպիսի թվական, ամեն անգամ, որ կրթական հարցերի կամ ձեր երեխայի առաջադիմության կապակցությամբ մտահոգվեք, կարող եք IEP ժողով խնդրել: Խնդրանքը գրավոր ներկայացրեք, որպեսզի ունենաք խնդրանքի և նրան անմիջապես ընթացք տալու և ասպացույցը:

Mental Health Advocacy Services, Inc.
3255 Wilshire Boulevard, Suite 902
Los Angeles, California 90010
213-389-2077